ԱՐՄԵՆՊՐԵՍ ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N <<ԱՊ-ՄԱԱՊՁԲ-16/18>>

ք. Երևան <<27>> <<ապրիլի>> 2018թ.

<<Արմենպրես>> ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Արամ Անանյանի, որը գործում է կամակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Գնորդ>>, մի կողմից, և <<Խաս-Խազ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հայկ Խասխազյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Վաճառող>> մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 1) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված տնտեսական ապրանքները /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 2/:

2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 1 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ նրա կողմից նշված հասցեով /ներով/:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են հինգ օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայամագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են հինգ օրից ավելի,

3.1.8 Ձննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայամագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս ծախսերը:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ 920 270 (ինը հարյուր քսան հազար երկու հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 15.12.2018թ. :

5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/՝ Պայմանագրի N 1 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 3) և Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հինգօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.5 Եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ապրանքի ամբողջ ծավալով մատակարարման ժամկետի ավարտն ընկած ժամանակահատվածի յուրաքանչյուր վեցերորդ ամիսը լրանալը Գնորդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա սահմանված կարգով շրջանակային համաձայնագրերով կազմակերպում է տվյալ ապրանքի ձեռքբերման նոր ընթացակարգ: Եթե այդ ընթացակարգի արդյունքում սահմանված կարգով ձևավորված նվազագույն միավոր գինը որևէ ապրանքի մասով ցածր է Պայմանագրով

անված գնից, ապա այդ մասով Գնորդը մեկ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին ներկայացնում է ապրանքը ձևավորված ցածր գնով մատակարարելու պահանջ և Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագրի նախագիծը: Եթե Վաճառողը երկու աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում և Գնորդին ներկայացնում Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագիրը, ապա այդ մասով Գնորդը ընտրված մասնակցի հետ կնքում է նոր պայմանագիր և դրա ուժի մեջ մտնելու ամսաթվին համապատասխան այդ մասով միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը՝ առանց Վաճառողի նկատմամբ Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման:

9.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

9.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.10 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Վաճառողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

9.11 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.13 Պայմանագիրը կազմված է հինգ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
<<Արմենպրես>> ՓԲԸ	**<<Խաս-Խազ>> ՍՊԸ**
ք.Երևան, Սարյան 22	**ք.Երևան, Վարդանանց 22 5**
<<ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ>> ՓԲԸ	**<<ԻՆԵԿՈԲԱՆԿ>> ՓԲԸ**
Հ/Հ 220553330048000	**Հ/Հ 2050022103621001**
ՀՎՀՀ 01506041	**ՀՎՀՀ 01546394**
_____ Ա.ԱՆԱՆՅԱՆ	_____ Հ. ԽԱՍԽԱԶՅԱՆ
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված
<< 27 >> <<ապրիլի>> 2018թ. կնքված
N <<ԱՊ-ՄԱԱՊՁԲ-16/18>> ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի									
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
							Հասցեն՝ Երևան,	ենթակա քանակը I կիսամյակ	ենթակա քանակը II կիսամյակ
1	39221490	Սանիտարահիգենիկ նշանակության սինթետիկ խորանարդաձև կամ ուղղանկյուն/10-6/սմ մետաղական սպիրալով	հատ	180	7200	40	Սարյան 22	20	20
2	19211200	Լաթ փոշի մաքրելու համար, սրբիչատիպ կամ միկրոֆիբրա 30x30սմ	հատ	550	38 500	70	Սարյան 22	35	35
3	19211200	Հատակի լվացման լաթ ունիվերսալ, սրբիչատիպ, նախատեսված բոլոր տեսակի մակերևույթների համար, խտությունը 300գր/մ.ք, չափսը 50 x 50 սմ, տրիկոտաժային կամ հյուսվածքային բամբակյա հումքից	հատ	500	8 000	16	Սարյան 22	8	8
4	19211200	Լաթ ունիվերսալ	հատ	280	8 400	30	Սարյան 22	15	15
5	39831281	Լաթեր ապակի մաքրելու համար, միկրոֆիբրա	հատ	440	8 800	20	Սարյան 22	10	10
6	39831276	Ախտահանող մաքրող նյութեր 700գ. տարաներով	հատ	550	16 500	30	Սարյան 22	15	15
7	39831276	Ախտահանող մաքրող նյութեր 1լ տարաներով	հատ	1 020	35 700	35	Սարյան 22	18	17
8	24451140	Ախտահանիչ նյութեր, 500գ կամ ավելի տարաներով	հատ	500	15 000	30	Սարյան 22	15	15

9	39812600	Մաքրող մածուկներ և փոշիներ, սպիտակ գույնի փոշիանման զանգված 500գ կամ ավելի տարաներով	հատ	580	14 500	25	Սարյան 22	13	12
10	39812600	Մաքրող մածուկներ և փոշիներ, մաքրող հեղուկներ 500գ կամ ավելի տարաներով	հատ	390	7 800	20	Սարյան 22	10	10
11	39831100	Ախտահանիչ նյութ, ժավել, 5լ, պլաստմասե տարայով	հատ	2 600	23 400	9	Սարյան 22	5	4
12	39831280	Հեղուկ նախատեսված ապակիներ լվանալու համար, 0,5լ շշերով	հատ	700	24 500	35	Սարյան 22	18	17
13	39224331	Դույլ պլաստմասսե 8 լիտր տարողությամբ	հատ	1 000	8 000	8	Սարյան 22	4	4
14	39831241	Ձեռքի օճառ չորսուների, կտորների և այլ ձևերով, յուրաքանչյուրը 150գ զանգվածով: Որակական թիվը (ճարպաթթուների զանգվածը վերահաշվարկված 100 գ կտորի անվանական զանգվածի համար) ոչ պակաս՝ 78 գ, տուփով, 1 տուփը՝ 5 հատանոց	հատ	280	28 000	100	Սարյան 22	50	50
15	39831245	Հեղուկ օճառ 5 լ. տարայով, տարբեր գույնի, ծորող հեղուկ, pH 6.0, կպչությունը mPa.s; 25C, խտությունը՝ (20) 1.04, պարունակությունը՝ լաուրիլսուլֆատի նատրիումի եթեր, կոկոսի յուղ, կիտրոնի թթու պոլիեթիլենգլիկոլ-15 կոկոպոլիամին, բետարին, գլիցերին, տետրասոդիում, դեիոնիզացվածջուր, կերակրի աղ	լիտր	2 500	20 000	8	Սարյան 22	4	4
16	39831278	Մածուցիկ, հոտավետ հեղուկ 5լ. տարաներով	հատ	2 500	20 000	8	Սարյան 22	4	4
17	33141118	Անձեռոցիկ թղթյա, տուփերով, եռաշերտ, շերտերի չափը՝ 16x21,5 սմ, սպիտակ գույնի 100 հատ±2, ստվարաթղթե տուփերով	տուփ	320	19 200	60	Սարյան 22	30	30
18	33761300	Խոհանոցի անձեռոցիկ թղթյա, երկշերտ կամ եռաշերտ, շերտերի չափը՝ 16x43 սմ, սպիտակ գույնի 100 հատ±2	հատ	750	75 000	100	Սարյան 22	50	50
19	39221350	Մեկանգամյա օգտագործման բաժակներ, պլասմասե, 100մլ տարողությամբ	հատ	20	8 000	400	Սարյան 22	200	200
20	39221410	Սենյակային ավել բնական, հատակը մաքրելու համար, քաշը չոր վիճակում 350-500 գրամ, երկարությունը 85-90սմ	հատ	1 000	14 000	14	Սարյան 22	7	7
21	39221420	Խոզանակներ զուգարանի մաքրման համար պլաստմասե բռնիչով	հատ	880	7 040	8	Սարյան 22	4	4
22	33761000	Զուգարանի թուղթ 90-ից մինչև 150մմ տրամագծով, գլանային փաթեթով (70-ից մինչև 150գ զանգվածով),	հատ	220	99 000	450	Սարյան 22	225	225

		միաշերտ, փափուկ							
23	18421130	Ձեռնոցներ ռետինից I տիպի՝ N 2, N 3 (M, L կամ XL չափի), հաստությունը՝ 0,6-0,9 մմ, երկարությունը 300 մմ ոչ պակաս	զույգ	560	16 800	30	Սարյան 22	15	15
24	39811100	Փակ սենյակի հոտի թարմացման համար, վակուումային բալոնիկով, թարմ ծաղկային բուրմունքով, 275 մլ տարողությամբ կամ համարժեք	հատ	900	22 500	25	Սարյան 22	13	12
25	43231100	Սկոբաներ, կապրոնից կամ պլասմասե, մետաղյա գամերով, նախատեսված 2.5-5 մմ լար ամրացնելու համար, 1 տուփի մեջ նվազագույնը 50 հատ	հատ	550	1 650	3	Սարյան 22	2	1
26	44511220	Ատաղձագործական նշանակության հիմնական օգտագործման ձեռքի մեխանիկական գործիքներ	հատ	3 500	28 000	8	Սարյան 22	4	4
27	19641000	Աղբի պոլիէթիլենային տոպրակներ՝ սև կամ գունավոր, աղբը հավաքելու համար, տուփով, տուփի մեջ՝ 10 հատ, առնվազն 35լ տարողությամբ:	հատ	450	31 500	70	Սարյան 22	35	35
28	39839100	Գոգաթիակ ՝Պլաստմասե, ռետինե եզրով, բռնակով	հատ	700	6 300	9	Սարյան 22	5	4
29	39835000	Հատակ մաքրելու ձողի գլխիկ, պլաստմասե, լաքապատված, բամբակյա պարաններով, երկարությունը՝ 35 սմ	հատ	1 200	12 000	10	Սարյան 22	5	5
30	39835000	Հատակ մաքրելու ձող, փայտե կամ պլաստմասե, լաքապատված, հորիզոնական փայտի երկարությունը՝ 1,5 - 2մ	հատ	1 000	6 000	6	Սարյան 22	3	3
31	31651400	Մեկուսիչ ժապավեն լայնությունը 30մմ բարձր կպչողականությամբ	հատ	200	3 000	15	Սարյան 22	8	7
32	31684100	Վարդակ երկբևեռանի՝ Պոլիստիրոլե իրանով, հողանցումով, խրոցի համար 2 անցքով, ներքին մոնտաժման, պաշտպանության դասը IP20/IP30/IP31, երեքլ տեղանոց	հատ	720	1 440	2	Սարյան 22	1	1
33	31685000	Երկարացման լար 3մ 3տ (220-250) Վ հոսանքի լարման, մինչև 6 Ա հզորության	հատ	2 920	20 440	7	Սարյան 22	4	3
34	31685000	Երկարացման լար 5մ 3տ (220-250) Վ հոսանքի լարման, մինչև 6 Ա հզորության	հատ	3 000	21 000	7	Սարյան 22	4	3
35	31211180	Ավտոմատ անջատիչներ՝ 63 ամպեր, Անվտանգությունն՝ ըստ ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի	հատ	620	3 100	5	Սարյան 22	3	2

36	31686000	Էլեկտրական խրոց 6,3/10 Ա, 250 Վ, ԳՕՍՏ Ռ 51322.1-99 և ԳՕՍՏ 7396.1-89, անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված <<Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի>> և ԳՕՍՏ 12.2.007.0-75:	հատ	330	6 600	20	Սարյան 22	10	10
37	31531660	Լամպ՝ լեդ գնդաձև 9- 10W, անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված <<Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի>>, սովորական կոթառով	հատ	1 300	91 000	70	Սարյան 22	35	35
38	31531500	Ցերեկային լամպ 60սմ՝ խողովակաձև լյումինեսցենտային լամպ՝ ուղիղ, օղակաձև կամ U-ձև, G-13 տիպի լամպակոթով, 20 Վտ անվանական հզորությամբ, 50 Հց հաճախականությամբ, 60 սմ երկարությամբ: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված <<Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի>>	հատ	550	11 000	20	Սարյան 22	10	10
39	31531600	Ցերեկային լամպ 120սմ Խողովակաձև լյումինեսցենտային լամպ՝ ուղիղ, օղակաձև կամ U-ձև, G-13 տիպի լամպակոթով, 40 Վտ անվանական հզորությամբ, 50 Հց հաճախականությամբ, 120 սմ երկարությամբ: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված <<Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի>>	հատ	660	52 800	80	Սարյան 22	40	40
40	31531710	Լամպերի Դրոսել 400W, Q 400.561 Ret-No 925.561, 400W /3,50A/w130/85,220-210v, 50-60Hz կամ համարժեք	հատ	250	7 500	30	Սարյան 22	15	15
41	31521580	Լուսավորման համակարգ՝ Ցերեկային լամպ 120 սմ ամբողջական կորպուսով, կորպուսը մետաղական, 220-210v, 50-60Hz	հատ	4 800	57 600	12	Սարյան 22	6	6
42	31221180	Լամպի կոթառ՝ Պարուրակով, E40 սերիայի, 250Վ լարման, 50 Հց հաճախականության, կերամիկական	հատ	200	4 000	20	Սարյան 22	10	10

43	44511240	Աքցաններ՝ Հարթաշուրթ մետաղական, ռետինապատ բռնիչով, ստանդարտ չափսի	հատ	2 500	2 500	1	Սարյան 22	1	-
44	44511330	Պտուտակահանների կոմպլեկտ, պտուտակահաններ տարբեր չափսերի՝ 8-24, մետաղական	հատ	4 000	4 000	1	Սարյան 22	1	-
45	44511220	Տարբեր նշանակության (ատաղձագործական և սանտեխնիկական) ձեռքի մեխանիկական և ավտոմատ գործիքներ	հատ	3 000	3 000	1	Սարյան 22	1	-

Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ք. Երևան, Սարյան 22 հասցեում:

ԳՆՈՐԴ

<<Արմենպրես>> ՓԲԸ
ք.Երևան, Սարյան 22
<<ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ>> ՓԲԸ
Հ/Հ 220553330048000
ՀՎՀՀ 01506041

Ա.ԱՆԱՆՅԱՆ
(ստորագրություն)

Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

<<Խաս-Խազ>> ՍՊԸ
ք.Երևան, Վարդանանց 22 5
<<ԻՆԵԿՈԲԱՆԿ>> ՓԲԸ
Հ/Հ 2050022103621001
ՀՎՀՀ 01546394

Հ. ԽԱՍԽԱԶՅԱՆ
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2
<<27>> <<ապրիլի>> 2018թ. կնքված
N <<ԱՊ-ՄԱԱՊՁԲ-16/18>> ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

<< դրամ

Ապրանքի					
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ կիսամյակների, այդ թվում		
			I կիսամյակ	II կիսամյակ	Ընդամենը
1	39221490	Սպունգներ ման լվանալու	3 600	3 600	7 200
2	19211200	Կտորներ սեղանի շոր	19 250	19 250	38 500
3	19211200	Կտորներ հատակի շոր	4 000	4 000	8 000
4	19211200	Կտորներ	4 200	4 200	8 400
5	39831281	Ապակու մաքրման լաթ	4 400	4 400	8 800
6	39831276	Զուգարանների մաքրման նյութեր	8 250	8 250	16 500
7	39831276	Զուգարանների մաքրման նյութեր	18 360	17 340	35 700
8	24451140	Ախտահանիչ նյութեր	7 500	7 500	15 000
9	39812600	Մաքրող մածուկներ և փոշիներ	7 540	6 960	14 500
10	39812600	Մաքրող մածուկներ և փոշիներ	3 900	3 900	7 800
11	39831100	Լվացող նյութեր ժավել 5 լիտր տարրայով	13 000	10 400	23 400
12	39831280	Ապակի մաքրելու միջոց	12 600	11 900	24 500
13	39224331	Դույլ պլաստմասսե 8 լիտր	4 000	4 000	8 000

14	39831241	Օճառ, ձեռքի	14 000	14 000	28 000
15	39831245	Օճառ, հեղուկ 5 լիտր տարրայով	10 000	10 000	20 000
16	39831278	Սպասքի լվացման արտադրանք 5 լիտր տարրայով	10 000	10 000	20 000
17	33141118	Անձեռոցիկներ եռաշերտ	9 600	9 600	19 200
18	33761300	Խոհանոցի անձեռոցիկ	37 500	37 500	75 000
19	39221350	Մեկանգամյա օգտագործման բաժակներ	4 000	4 000	8 000
20	39221410	Ավելներ, խոզանակներ և զանազան այլ պարագաներ սովորական ավել	7 000	7 000	14 000
21	39221420	Ավելներ, խոզանակներ և զանազան այլ պարագաներ զուգարանի համար	3 520	3 520	7 040
22	33761000	Զուգարանի թուղթ, ռուլոնով	49 500	49 500	99 000
23	18421130	Ձեռնոցներ	8 400	8 400	16 800
24	39811100	Օդի թարմացուցիչներ	11 700	10 800	22 500
25	43231100	Սկրեպներ	1 100	550	1 650
26	44511220	Տարատեսակ ձեռքի գործիքներ	14 000	14 000	28 000
27	19641000	Պոլիէթիլենային պարկ աղբի համար	15 750	15 750	31 500
28	39839100	Գոգաթիակ, աղբ հավաքելու համար, ձողով	3 500	2 800	6 300
29	39835000	Հատակ մաքրելու ձող, պլաստմասե, փայտե, թելերով	6 000	6 000	12 000
30	39835000	Հատակ մաքրելու ձող, պլաստմասե, փայտե	3 000	3 000	6 000
31	31651400	Մեկուսիչ ժապավեն, օղակաձև	1 600	1 400	3 000
32	31684100	Վարդակ, երկբևեռանի	720	720	1 440
33	31685000	Էլեկտրական երկարացման լար 3 մետր	11 680	8 760	20 440
34	31685000	Էլեկտրական երկարացման լար 5 մետր	12 000	9 000	21 000
35	31211180	Ավտոմատ անջատիչներ	1 860	1 240	3 100
36	31686000	Խրոց սովորական	3 300	3 300	6 600

37	31531660	Լամպ՝ լեդ գնդաձև 9- 10W	45 500	45 500	91 000
38	31531500	Ցերեկային լամպ 60սմ	5 500	5 500	11 000
39	31531600	Ցերեկային լամպ 120սմ	26 400	26 400	52 800
40	31531710	Ցերեկային լամպի դրոսել	3 750	3 750	7 500
41	31521580	Ցերեկային լամպ 120 սմ ամբողջական կորպուսով	28 800	28 800	57 600
42	31221180	Կոթառ լամպի մեծ, կերամիկական	2 000	2 000	4 000
43	44511240	Աքցան (հարթաշուրթ)	2 500	-	2 500
44	44511330	Պտուտակահանների կոմպլեկտ	4 000	-	4 000
45	44511220	Տարատեսակ ձեռքի գործիքներ (կարգավորվող պտուտակ)	3 000	-	3 000

ԳՆՈՐԴ

<<Արմենպրես>> ՓԲԸ
ք.Երևան, Սարյան 22
<<ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ>> ՓԲԸ
Հ/Հ 220553330048000
ՀՎՀՀ 01506041

Ա.ԱՆԱՆՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

<<Խաս-Խազ>> ՍՊԸ
ք.Երևան, Վարդանանց 22 5
<<ԻՆԵԿՈԲԱՆԿ>> ՓԲԸ
Հ/Հ 2050022103621001
ՀՎՀՀ 01546394

Հ. ԽԱՍԽԱԶՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ.